Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

08 ապրիլի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ6/0078/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի մարտի 18-ի որոշումը,

ՊԱՐԶԵՑԻՆՔ

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Բեսսի Մարտիրոսյանը 2023 թվականի մարտի 3-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Դիլիջանի համայնքապետարանի՝ պատասխանողին մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը վերականգնելուն, այն է՝ Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Խորհուրդների փողոց, 23/2 հողամասի (հողամասի ծածկագիր 11-003-0316-0114) և Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան փողոց 16 հողամասի (հողամասի ծածկագիր 11-003-0316-0016) միացման հատվածում առկա բլուրի քանդված հողային շերտը երկու հատվածում (11-003-0316-0015 և 11-003-0316-0016-005)՝ ըստ տվյալ

տեղանքին բնորոշ քաղաքաշինության նորմերի, վերականգնելուն, ինչպես նաև ապօրինի շինություններից ազատելուն և դեպի Բեսսի Մարտիրոսյանի հողամաս տանող ճանապարհը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

2. 2024 թվականի հոկտեմբերի 14-ի դատական նիստի ընթացքում հայցվորը հստակեցրել է հայցի առարկան՝ խնդրելով պարտավորեցնել Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին վերականգնել մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը, այն է՝ վերականգնել Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Խորհուրդների փողոց, 23/2 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0114) և Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան փող., 16 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0016) միացման հատվածում առկա բլուրի քանդված հողային շերտը երկու հատվածում (11-003-0316-0015 և 11-003-0316-0130)՝ ըստ տվյալ տեղանքին բնորոշ քաղաքաշինության նորմերի, ինչպես նաև վերականգնել դեպի Բեսսի Մարտիրոսյանի հողամաս տանող թիվ 11-003-0316-0130 ծածկագրով համայնքային ճանապարհը:

3. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 31-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

4. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի մարտի 18-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

5. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի մարտի 27-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/1621/05/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական

դատարանը 2025 թվականի հունվարի 31-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Սույն գործի փաստերից և հայցի առարկայի հստակեցման վերաբերյալ միջնորդության պահանջից հետևում է, որ վեճը վերաբերում է հայցվորի սեփականության իրավունքի ենթադրյալ խախտումը վերացնելուն:*

Դատարանը հարկ է համարում նշել, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում թիվ ՏԴ/0112/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ դատավոր Ն.Անանյան, 10.03.2023 թվականի որոշմամբ վարույթ է ընդունվել Բեսսի Մարատի Մարտիրոսյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Լևոն Հովհաննեսի Բարդակջյանի հետևյալ պահանջի մասին. «Պարտավորեցնել պատասխանող Լևոն Բարդակջյանին վերացնելու հայցվորի սեփականության իրավունքի խախտումը, այն է՝ վերականգնել Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Խորհուրդների փողոց, 23/2 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0114) և Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., 16 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0016) միացման հատվածում առկա բլուրի քանդված հողային շերտը երկու հատվածում (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0015 և 11-003-0316-0016-005): Նշված գործի էլեկտրոնային քաղվածքի ուսումնասիրության արդյունքում Դատարանը փաստում է, որ սույն գործի և վերը նշված քաղաքացիական գործի պահանջները նույնական են:

Դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում վեճը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող սեփականության իրավունքի իրականացման կարգին, հետևաբար Դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջը ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության:

(…) Վերոգրյալի արդյունքում՝ դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջի քննությունն ընդդատյա է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին, հետևաբար պահանջն անհրաժեշտ է վերահասցեագրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան»[1]:

---

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 3-րդ, թերթեր 114-117:

7. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին, ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մարտի 18-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Ներկայացված հայցապահանջի, վերոգրյալ իրավակարգավորումների և դիրքորոշումների համատեքստում Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցապահանջն իրենից ներկայացնում է հանրային իրավահարաբերություններից բխող պահանջ, քանի որ նախ՝ իրավահարաբերության սուբյեկտներից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված համայնքի ղեկավարն է, սուբյեկտների միջև վիճելի իրավահարաբերությունը առաջացել է հանրային իշխանական լիազորություններով օժտված համայնքի ղեկավարի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականության կատարում, այն է՝ փաստական հետևանքներ առաջացնող գործողությունների կատարումը և/կամ իրավական հետևանք առաջացնող ակտերի ընդունումը, այսինքն՝ ակնկալվող հետևանքը իրավունքների խոչընդոտները վերացնող վարչարարության իրականացումն է:*

Այլ կերպ՝ հայցվորը հայցապահանջով փաստացի խնդրել է, որպեսզի համայնքի ղեկավարը իր իշխանական լիազորությունների շրջանակներում վերականգնի քանդված բլրի հողային շերտը և վերականգնի դեպի իր հողամաս տանող թիվ 11-003-0316-0130 ծածկագրով համայնքային ճանապարհը:

Դատարանն հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ վարչական դատարանի կողմից վկայակոչված ՏԴ/0112/02/23 քաղաքացիական գործի և սույն գործի պահանջները նույնական լինելու հանգամանքը ևս չի կարող գործն ըստ ընդդատության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու համար:

Այդուհանդերձ, Դատարանն արձանագրում է, որ թիվ ՏԴ/0112/02/23 քաղաքացիական գործի և սույն վարչական գործով ներկայացված պահանջները նույնական լինել չեն կարող լինել, քանի որ սույն գործով վեճն ի սկզբանե ծագել է ոչ թե մասնավոր իրավահարաբերության երկու սուբյեկտների, այլ ֆիզիկական անձի և հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավարի միջև, որտեղ համայնքի ղեկավարն, օրենքի ուժով ի պաշտոնե հանդիսանում է համայնքը ներկայացնող պաշտոնատար անձ, և այն բխում է հանրային իրավահարաբերություններից, մասնավորապես, ներկայացված հայցով ֆիզիկական անձը հանրային իշխանական մարմնից հայցում է որոշակի գործողությունների կատարում, որոնց չկատարելը խախտում է կամ անմիջականորեն կարող է խախտել իր իրավունքը:

Ավելին, ներկայացված հայցով հայցվորի ներկայացուցիչն, ըստ էության, պահանջել է Դիլիջան համայնքի ղեկավարին որպես հանրային իշխանության սուբյեկտի՝ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ (վարչարարություն), որը հայցվորի կարծիքով թույլ կտա վերականգնել իր ենթադրյալ խախտված իրավունքը:

Այսինքն՝ ներկայացվել է հայց՝ վարչական մարմին հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմնի դեմ, որը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և որի ենթակայությունը վերապահված է վարչական դատարանին, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ միայն ՀՀ վարչական դատարանի վերջնական դատական ակտով կարող է լուծվել գործողություն կատարելուն պարտավորեցնելու կամ այդ պահանջը մերժելու հարցը:

Վերը նշվածի համատեքստում, անդրադառնալով ՀՀ վարչական դատարանի կողմից վերահաստատված հայցադիմումի ենթակայությանը,

Դատարանը գտնում է, որ այն ենթակա չէ քննության ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, այսինքն՝ Դատարանը համաձայն չէ ստացած գործի ենթակայությանը, որպիսի պայմաններում գործի ենթակայությունը որոշելու համար այն պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարան»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

8. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ6/0078/05/23 գործն ըստ Բեսսի Մարտիրոսյանի հայցի ընդդեմ Դիլիջան համայնքի ղեկավարի՝ պատասխանողին մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը վերականգնելուն, այն է՝ Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Խորհուրդների փողոց, 23/2 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0114) և Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան փող., 16 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0016) միացման հատվածում առկա բլուրի քանդված հողային շերտը երկու հատվածում (11-003-0316-0015 և 11-003-0316-0130)՝ ըստ տվյալ տեղանքին բնորոշ քաղաքաշինության նորմերի, վերականգնելուն, ինչպես նաև դեպի Բեսսի Մարտիրոսյանի հողամաս տանող թիվ 11-003-0316-0130 ծածկագրով համայնքային ճանապարհը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

9. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

---

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 3-րդ, թերթեր 122-129:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

10. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ*

հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

11. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Բեսսի Մարտիրոսյանը 2023 թվականի մարտի 3-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Դիլիջանի համայնքապետարանի՝ պատասխանողին մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը վերականգնելուն, այն է՝ Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Խորհուրդների փողոց, 23/2 հողամասի (հողամասի ծածկագիր 11-003-0316-0114) և Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան փողոց 16 հողամասի (հողամասի ծածկագիր 11-003-0316-0016) միացման հատվածում առկա բլուրի քանդված հողային շերտը երկու հատվածում (11-003-0316-0015 և 11-003-0316-0016-005)՝ ըստ տվյալ

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

տեղանքին բնորոշ քաղաքաշինության նորմերի, վերականգնելուն, ինչպես նաև ապօրինի շինություններից ազատելուն և դեպի Բեսսի Մարտիրոսյանի հողամաս տանող ճանապարհը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին[4],

- 2024 թվականի հոկտեմբերի 14-ի դատական նիստի ընթացքում հայցվորը հստակեցրել է հայցի առարկան՝ խնդրելով պարտավորեցնել Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին վերականգնել մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը, այն է՝ վերականգնել Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Խորհուրդների փողոց, 23/2 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0114) և Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան փող., 16 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0016) միացման հատվածում առկա բլուրի քանդված հողային շերտը երկու հատվածում (11-003-0316-0015 և 11-003-0316-0130)՝ ըստ տվյալ տեղանքին բնորոշ քաղաքաշինության նորմերի, ինչպես նաև վերականգնել դեպի Բեսսի Մարտիրոսյանի հողամաս տանող թիվ 11-003-0316-0130 ծածկագրով համայնքային ճանապարհը[5],

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 31-ի որոշմամբ վերահասցեագրվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն գործով ներկայացված վեճը վերաբերում է հայցվորի սեփականության իրավունքի ենթադրյալ խախտումը վերացնելուն, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող սեփականության իրավունքի իրականացման կարգին: Միաժամանակ, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում առկա է նույնական պահանջով քաղաքացիական գործ[6],

- Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մարտի 18-ի որոշմամբ գտել է, որ հայցապահանջն իրենից ներկայացնում է հանրային իրավահարաբերություններից բխող պահանջ, քանի որ նախ՝ իրավահարաբերության սուբյեկտներից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված համայնքի ղեկավարն է, սուբյեկտների միջև վիճելի իրավահարաբերությունը առաջացել է հանրային իշխանական լիազորություններով

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

օժտված համայնքի ղեկավարի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականության կատարմամբ, այն է՝ փաստական հետևանքներ առաջացնող գործողությունների կատարմամբ և/կամ իրավական հետևանք առաջացնող ակտերի ընդունմամբ, այսինքն՝ ակնկալվող հետևանքը իրավունքների խոչընդոտները վերացնող վարչարարության իրականացումն է: Այլ կերպ՝ հայցվորը հայցապահանջով փաստացի խնդրել է, որպեսզի համայնքի ղեկավարը իր իշխանական լիազորությունների շրջանակներում վերականգնի քանդված բլրի հողային շերտը և վերականգնի դեպի իր հողամաս տանող թիվ 11-003-0316-0130 ծածկագրով համայնքային ճանապարհը, իսկ թիվ ՏԴ/0112/02/23 քաղաքացիական գործի և սույն գործի պահանջները նույնական լինելու հանգամանքը ևս չի կարող հիմք լինել՝ գործն ըստ ընդդատության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու համար[7]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ հայցադիմումի առարկան կազմող հիմնական պահանջը Դիլիջան համայնքի ղեկավարին որոշակի գործողություն կատարելուն պարտավորեցնելու պահանջն է, իսկ հայցի հիմքը՝ Դիլիջան համայնքին պատկանող հողամասի վրա կառուցված շինությամբ հայցվորին վնաս հասցնելու և պատասխանողի կողմից անգործություն դրսևորելու փաստերը, որպիսի իրավահարաբերություններում տեղական ինքնակառավարման մարմինը՝ Դիլիջան համայնքի ղեկավարը, հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, այլ ոչ որպես քաղաքացիաիրավական մասնավոր հարաբերությունների սուբյեկտ:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը ենթակա են ՀՀ վարչական դատարանի իրավասությանը, սույն գործով հայցվորը պահանջել է հանրային-իշխանական լիազորություններով օժտված տեղական ինքկանակառավարման

[7] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

մարմնից կատարելու համապատասխան գործողություններ՝ իրեն պատկանող գույքին հասցվող վնասը կանխելու նպատակով:

Ինչ վերաբերում է թիվ ՏԴ/0112/02/23 քաղաքացիական գործի՝ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվելու հանգամանքին, ապա հարկ է նշել, որ նշված գործով իրավական վեճն ուղղված է ոչ թե վարչական մարմնի, այլ Լևոն Բարդակջյանի դեմ, այսինքն՝ նշված գործերով հայցադիմումներն ուղղված են տարբեր սուբյեկտների դեմ, որպիսի պայմաններում թիվ ՏԴ/0112/02/23 գործով և սույն գործով հայցի առարկները նույնական լինել չեն կարող:

Հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

14. Վերոգրյալից հետևում է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ6/0078/05/23 գործն ըստ Բեսսի Մարտիրոսյանի հայցի ընդդեմ Դիլիջան համայնքի ղեկավարի՝ պատասխանողին մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը վերականգնելուն, այն է՝ Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Խորհուրդների փողոց, 23/2 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0114) և Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան փող., 16 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0016) միացման հատվածում առկա բլուրի քանդված հողային շերտը երկու հատվածում (11-003-0316-0015 և 11-003-0316-0130)՝ ըստ տվյալ տեղանքին բնորոշ քաղաքաշինության նորմերի, վերականգնելուն, ինչպես նաև դեպի Բեսսի Մարտիրոսյանի հողամաս տանող թիվ 11-003-0316-0130 ծածկագրով համայնքային ճանապարհը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Ուստի գտնում ենք, որ Բեսսի Մարտիրոսյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ6/0078/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ6/0078/05/23 գործն ըստ Բեսսի Մարտիրոսյանի հայցի ընդդեմ Դիլիջան համայնքի ղեկավարի՝ պատասխանողին մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակը վերականգնելուն, այն է՝ Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Խորհուրդների փողոց, 23/2 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0114) և Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան փող., 16 հողամասի (հողամասի ծածկագիր՝ 11-003-0316-0016) միացման հատվածում առկա բլուրի քանդված հողային շերտը երկու հատվածում (11-003-0316-0015 և 11-003-0316-0130)՝ ըստ տվյալ տեղանքին բնորոշ քաղաքաշինության նորմերի, վերականգնելուն, ինչպես նաև դեպի Բեսսի Մարտիրոսյանի հողամաս տանող թիվ 11-003-0316-0130 ծածկագրով համայնքային ճանապարհը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ